



<< 23 >> 05 2016թ.

N 01/15/1765-16

*Ինֆորմացիայի ազատության կենտրոնի  
նախագահ տիկին Լիանա Դոյդոյանին*

**Հարգելի տիկին Դոյդոյան**

Ի պատասխան Ձեր 17.05.2016թ. N 284-ի 2 գրությամբ տեղեկատվություն ստանալու հարցմանը (մտից՝ 17.05.2016 թ. N 5865-16) հայտնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության <<Mulberry>> համակարգը գործնականում ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ սահմանված պահանջների կատարումը: Այսպես, մարզպետարանի պաշտոնական կայքի (<http://armavir.mtaes.am>) <<Դիմեք մեզ>> բաժնում համալրմամբ ընդգրկված՝

- <<Մեր հասցեն>>>,
- <<Մեզ կարող են դիմել>>>,
- <<Թեժ գիծ>>>,
- <<<< Արմավիրի մարզպետին կամ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ուղղված դիմումների ձևեր>>>,
- <<Գրել առցանց նամակ>>>,
- <<Հետևեք Ձեր նամակի ընթացքին>>>,
- <<Տեղեկատվություն ստանալու իրավունքն ու կարգը>>>,
- << Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձևեր>> և

- << Տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>> ենթաբաժինները լիովին հնարավորություն են տալիս << կառավարության վերը նշված որոշման պահանջներին համապատասխան տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման և մարզպետարանի պաշտոնական կայքում տվյալների հրապարակման համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ << Արմավիրի մարզպետարանն անմիջականորեն առաջնորդվում է << կառավարության 15.10.2015 թ. N 1204-Ն որոշմամբ սահմանված <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման>>, <<Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների (այսուհետ՝ պետական մարմին) կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման>> կարգերով, ինչպես նաև << Արմավիրի մարզպետի 28.12.2013թ. N 432-Ա որոշմամբ հաստատված << Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգով, որոնք տեղադրված են << Արմավիրի մարզպետարանի կայքում (<http://armavir.mtaes.am/about/>):

Ինչ վերաբերում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով հարցման ընթացքին հետևելու տեխնիկական խնդրի լուծմանը՝ նշենք, որ այն պայմանավորված է կենտրոնացված կարգով համապատասխան ծրագրային փոփոխությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Փ.Կարապետյան  
Դ.Դավթյան  
Հ.Վարդանյան